Վարդանանք կրթահամալիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հ.Շիրազի հայրենասիրական քնարը,աշխարհայացքային շերտերը

Հետազոտող ուսուցիչ՝ Նունե Մինասյան

Հետազոտական աշխատանքի ղեկավար՝ Անահիտ Անտոնյան

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……2

ԳԼՈՒԽ 1. ՇԻՐԱԶԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԻ……...5

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԸ

1.1. Ժամանակաշրջանի գաղափարախոսությունը

1.2.Ազգային զարթոնքի կոչը

1.3.Շիրազի հայրենապաշտությունը, ձևավորվող

պահանջատիրության նմուշները

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ

ՏԵՍԱԿ, ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ……8

2.1. Հայրենասեր գրողի նոր հոգեկերտվածքը

2.2. Հայոց իրական հայրենիքը իր ամբողջության մեջ

2.3. Պահանջատրությունից զուրկ կարոտի երգեր

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԿԱՏԱՐԵԼԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՑՈՂ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ……..…12

3.1.Պահանջատիրության գաղափարները «Քնար

Հայաստանի» պոեում

3.2. Կորսված հայրենիքը վերադարձնելու ճանապարհները

ԳԼՈՒԽ 4. ՇԻՐԱԶԻ ԲՈՂՈՔԸ, ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉԸ……14

4.1. Գերտերությունների անտարբերությունը, հայոց

ցեղասպանությունը

4.2. Բողոքի, ըմբոստացման և մարտակոչի ընդգծված

շեշտերը Շիրազի ստեղծագործություններում

4.3. Շիրազի աշխարհայացքի երրորդ շերտը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Հասարակության զարգացման հեռանկարները, մարտահրավերներին դիմակայելը, ամուր պետություն ստեղծելն ու պահպանելը, ազգային նկարագիրը պահելն ու արժանապատիվ սերունդ ձևավորելը, անմիջականորեն կապված են աճող սերնդի կրթության և դաստիարակության հետ: Անհերքելի է այն փաստը, որ դաստիարակության գործում իր ուրույն տեղն ունի ազգային մշակույթը, մասնավորապես՝ գրականությունը: Գրական այս կամ այն երկի ազդեցությամբ ձևավորում ենք արժեքային համակարգ, հոգեկերտվածք: Հայրենասիրությունը ձևավորում ենք նաև համապատասխան գրականության ուսուցմամբ: Հայրենիքն իբրև բացարձակ արժեք ձևավորելու գործը՝ յուրաքանչյուր ուսուցչի առաքելությունն է:

Ուսումնասիրության նպատակը. Ուսումնասիրել և վերլուծել Հ.Շիրազի հայրենասիրական ստեղծագործությունները, ազատագրական պայքարի նկարագիրը բանաստեղծի երկերում, դրա միջոցով հայրենանվեր սերունդ ձևավորելու գործընթացն արդյունավետ դարձնել:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Շիրազի հայրենասիրական քնարը, կառուցվածքը, աշխարհայացքային շերտերը:

2. Դիտարկել և վերլուծել հազարամյա պատմության հերոսական էջերը՝ իբրև հայրենիքի նկատմամբ նվիրվածության և սիրո աղբյուր:

3. Կարևորել գրականության դերը հայրենանվեր անհատի ձևավորման գործում:

4. Դիտարկել և վերլուծել 60-ական թվականների գրական սերնդի ժամանակաշրջանը, նրա ազդեցությունը գրողի աշխարհայացքի վրա:

5. Ներկայացնել ժամանակի գաղափարախոսությունը և Շիրազին՝ իբրև տարբերվող, ըմբոստ անհատ:

6. Վերլուծել և մեկնաբանել Շիրազի պահանջատիրությունը և գրեթե մերկապարանոց «արարատապաշտությունը»:

Ուսումնասիրության օբյեկտը. Հ.Շիրազի հայրենասիրական քնարը:

Ուսումնասիրության առարկան. Հայրենիքն իբրև բացարձակ արժեք:

Հետազոտության նորույթը. Պահանջատիրության տարբեր դրսևորումների վերլուծությունը Հ. Շիրազի հայրենասիրական քնարում;

Հետազոտության տեսական նշանակությունը. պայմանավորված է նյութին առնչվող առկա գրականության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը. Հետազոտությունը կհանդիսանա նյութ

ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների համար։

Աշխատանքի կառուցվածքը. Հետազոտական աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից ։ Աշխատանքը ամփոփված է 22 համակարգչային էջում։

Իրավ քանի լեզու գիտես՝
Այնքան մարդ ես՝ իրավն ասին,
Բայց, որ քո հայ լեզուն չունես,
Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին,
Որ թողել ես քո մայրենին՝
Հարամ է քեզ հայոց գինին,
Հարամ է քեզ աղջիկն հայոց,
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց։

Հովհաննես Շիրազ

Գլուխ 1.Շիրազի հայրենասիրական քնարը,աշխարհահայացքային շերտերը

Աշխարհում տեղի ունեցած և ունեցող քաղաքական տեղաշարժերը և դրանց հայ իրականության վրա ունեցած հարցերը թողնելով հասարակագետների և պատմաբանների քննությանը՝ նշեմ միայն,որ այդ ընդհանուր պայմանները լոկ հարմար առիթ էին հայ ժողովրդի համար մղվելու դեպի ազգային ազատագրական պայքար,որին նա պատրաստ էր նախ և առաջ տասնամյակների ընթացքում իր կուտակված լիցքի շնորհիվ: Այդ լիցքերի հիմնական աղբյուրն են՝ ցեղի հազարամյա պատմությունն՝ իր հերոսական էջերով,դարասկզբի ողբերգական իրադարձությունների հետևանքով Արևմտյան Հայաստանի և հայկական այլ տարածքների կորստի հետ չհամակերպվող ազգային ոգին և,իհարկե,առաջին հերթին հայ գրականությունը: Գրականությունը,որովհետև նրա արտահայտչաձևերը,հնարավորություն են տալիս արվեստագետներին տարբեր ճանապարհներով ընթերցողին հասցնելու այն մտքերը,որոնք ուղղակիորեն արտահայտելն վտանգավոր էր: 60-80-ական թթ. հայ գրականության կենտրոնական դեմքերից շատերը չապրեցին մինչև համազգային շարժում,իսկ եթե հրաշքով ապրեին մինչև մեր օրերը,Սևակը երիցս պիտի ասեր. «Դե եկ վարդապետ,ու մի խենթացիր»:

Գրական այդ սերունդը ապրելով բազմաթիվ տատանումներ,կրելով ժամանակի գրական ու քաղաքական մտքի տարբեր ազդեցություններ,այնուհանդերձ,կարողացավ գտնել հայ գրողի առաքելությունը և դարձավ ժողովրդի իղձերի կրողն ու դրանց իրականացման ուղեցույցը: Թվում է՝ այդ ամենը Շիրազին չպետք է վերաբերվեին,որովհետև ի սկզբանե նրա հայրենասիրությունը,«արարատապաշտությունը» և պահանջատիրությունն ակնհայտ և գրեթե մերկապարանոց են: Սակայն նույնիսկ Շիրազի ստեղծագործության մեջ երբեմն հանդիպում ենք պարտադրված գաղափարախոսության: Թերևս միայն բնածին տաղանդը բավարար չէր թոթափելու համընդհանուր ընդունելին,դրա համար բանաստեղծ լինելը քիչ էր,պետք էր լինել նաև քննող,պեղող,վերլուծող,իսկ հայ իրականության պարագայում նաև՝ արյան կանչով սեփական պատմության ակունքները խորասուզվող և դրանցով սնվող բանաստեղծ:

Դեռևս քսան տարեկանում իր «Սիամանթո և Խչեզարե» պոեմով,նա արդեն հայ գրականության նշանավոր դեմքերից էր: Պոեմի հատկապես առաջին տարբերակում տիրապետողը սիրո թեման է,սակայն հետագա հրատարակություններում սիրո թեմային զուգահեռ առկա է նաև հայրենասիրությունը,որը հետագայում դարձավ Շիրազի քնարերգության գերթեման: Պոեմը սրանով էլ տարբերվում է սիրո թեմայով գրված պոեմներից: Համեմատելով Թումանյանի «Անուշ» պոեմի հետ,կարող ենք հիմնավորել վերը նշվածը:

Այսպես,Թումանյանի պոեմում իր հայրենի լեռնաշխարհն է,մինչդեռ Շիրազի պոեմում Արևմտյան Հայաստանի բնաշխարհն է,ավելի կոնկրետ Վանա լճի շրջակայքը: Թեև պոետի ներկապնակը բազմերանգ է ու պատկերավոր,սակայն նա չի տեսել այդ բնաշխարհը:

Թվում է՝ կարևոր հանգամանք չէ,որովհետև պոետը մշակել է ժողովրդական մի սիրավեպ,որի գործողությունների տարածքը Վասպուրական աշխարհն է,սակայն հենց առաջին տողերից էլ զգացվում է հեղինակի անհագ կարոտը կորոսյալ հայրենիքի նկամամբ,և նա փորձում է այդ կարոտը անշեջ պահել ընթերցողի հոգում:

«Բայց թե եկեք,ով աղջիկներ,եկեք Սիփան ձեզ տանեմ,

Գեթ երգի մեջ աստվածային սիրո ճամփան ձեզ հանեմ։

Ում սրտի մեջ դեռ դատարկ է սիրո սափորն հայրենի

Եկե՛ք տանեմ ձեզ Վանա ծով,որ աղբյուրն է Սիփանի։

Իսկ մինչ այդ՝

Ուր որ ջահել մի հայ հովիվ և քուրդ աղջիկ մի սիրուն

Երազանքով իրար գտան մեր Սիփանա սարերում։

Ընդգծված բառերն ու բառակապակցությունները պատահական չեն,բանաստեղծը աստվածային սիրո ճամփան խոստանում է տանել գեթ երգի մեջ։ Այստեղ սեփական ցավն ու կարոտն է աստվածային եզերքի հանդեպ։ Պոետի համար աշխարհում ոչինչ գոյություն չունի հայրենիքից բաժան ո՛չ սեր,ո՛չ երջանկություն։ Սիրո սափորն էլ միաձուլված է հայրենի բառին՝սիրո սափորն հայրենի։ Հետագայում Շիրազը Վանա լիճն անվանելու է Սիփանի,ինչպես նաև՝ հայ ժողովրդի արցունք.«Եկե՛ք տանեմ ձեզ Վանա ծով,որն արցունքն է Սիփանի»։ Պատահական չէ նաև մեր Սիփանա սարերում բառակապակցությունը,որտեղ առկա է պահանջատիրության գաղափարը,որը հետզհետե զարգանում է. հովիվը անմեղ սիրո համար բռնի վտարվելով հարազատ եզերքից,հրաժեշտի երգում սրտի մորմոքը կիսում է հայր Սիփանի և մայր Վանա ծովի հետ։

-Մնաք բարով,իմ հայր Սիփան

Եւ դու իմ մայր Վանա ծով,

Ուր էլ գնամ ձեզ հավիտյան

Չեմ մոռանա իմ լացով։

(հ.3 էջ 214)

Ավելին,Շիրազի հերոսն ընդհամենը սիրահար պատանի չէ,այլ հայ կտրիճ,ով երդվում է վերադառնալ և տեր կանգնել ի՛ր սիրեցյալին,ի՛ր հայրենիքին։

Մնաս բարով և դու իմ սեր,

Բայց թող հայրդ իմանա,

Ուր էլ գնամ,ես կգամ դեռ,

Քաջն անմուրազ չի մնա։ (հ.3 էջ 215)

Հետագայում Շիրազը անվերջ վերամշակեց պոեմը,արծարծելով հայրենասիրական գաղափարներ և մտքեր,որից զգալիորեն փոխվեց նաև երկի գաղափարական բովանդակությունը։

Ինչ խոսք,սերը հայրենիքի հանդեպ միշտ էլ հայ բանաստեղծի գերթեման է եղել,պարզապես Շիրազն այն զարգացրեց նորովի,չլինելով ականատեսը դարասկզբի արհավիրքների,բայց ապրելով դրանց ողբերգության մեջ: Սա նոր հոգեբանություն էր մեր գրականության մեջ,հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ,որը պարտադրված էր հայ գրողին,պարտադրված…սեփական ժողովրդի ողբերգական ճակատագրով:

Գլուխ 2.Հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ,նոր հոգեբանություն

Շիրազի քնարերգության գույները ի սկզբանե հարուստ էին,սակայն հայրենասիրական քնարն,որը հիմնականում ձևավորվեց պատերազմական տարիներից սկսած և իր բարձունքին հասավ 50-60-ական թվականներին,ամենգունագեղն ու հնչեղն էր։ Բանաստեղծի ստեղծագործական փուլերը միշտ չէ,որ ժամանակային առումով հստակ են։

Հաճախ նույն շարքում,նույն օրերին գրված բանաստեղծությունները միանգամայն տարբեր աշխարհայացքի դրսևորումներ ունեն։

Կարծում եմ,այդ շերտերի հստակ ճշգրտմանը խանգարում է նաև այն,որ Շիրազն հազվադեպ է բանաստեղծությունների տակ նշել գրելու տարեթիվը։ Եւ այնուամենայնիվ,40-50-ական թվականների սկզբին Շիրազը հայտնագործում է հայոց իրական հայրենիքը իր ամբողջականության մեջ և ոչ թե առաջին աշխարհամարտից հետո քարտեզներում գծված սահմաններով։ Սա Շիրազի հայրեներգրության աշխարհահայացքային առաջին շերտն է։ Նրա պատանի հերոսի հռետորական հարցը ու ստացած պատասխանը այնս կասկած չեն թողնում ընթերցողի մեջ,որ հայրենիքը այն է,

…որ ունի բարձր երկինք,

…էն,որ ունի աշխարհի թագ

Քանց թագավոր Մասիս ճերմակ …

…Էն որ ունի Մասիսն ի վար

Հին-հին բերդեր,վանքեր մթար,

Որ ավերակ,բայց դեռ դարեր.

Լուռ կաղոթեն երկինքն ի վեր,

Էն որ ունի Արագ,Տղմուտ

Եւ ափերը մամռոտ ու մութ

Գերեզմանին են պապերուդ։

(հ.1 էջ 214)

Այս «հայտնագործությունից» էլ սկիզբ է առնում նաև կարոտի և մորմոքի ողբը՝կորոսյալ հայրենիքի հանդեպ։

Կուզեի նստել մի քարի վրա

Եւ անվերջ նայել իմ Արարատին։

Հարբել հայրենի միրաժով նրա

Եւ հավերժ նայել իմ Արարատին։

…Եւ նստած լռին այդ քարի վրա՝

Անդադար նայեմ իմ Արարատին,

Մինչև շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,

Եւ մամռած նայեմ իմ Արարատին։

(հ.1 էջ 196)

Կամ՝

Դու երազիս պես բարձր ու անբարբառ՝

Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու.

Հայացքս է սառել,ձյուն դառել վրադ՝

Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու

Մի՞թե շատ պիտի մնաս,Արարա՜տ,

Ինձ այսքան մոտիկ և այսքան հեռու…

(հ.1 էջ 204)

Սրանք կարոտի երգեր են,սակայն զուրկ են պահանջատիրությունից։ Եւ հենց այս նույն տարիներին էլ գրողի ստեղծագործություններում երևան եկավ նոր թեմա,որն այլևս չընդհատվեց։ Նման երգերի առանցքը մեր պատմության հերոսական էջերի և հայրենանվեր անհատների փառաբանումն էր, և նրանց գործի գովերգումը։

Երբ նայում եմ լեռնապարին,

Մեզ սարերին մեր հայկական,

Թվում է,թե Տիգրան Մեծի

Վրաններն են հավերժական։

…Եվ Մասիսն է գլխին պահում

Սաղավարտը Տիգրան Մեծի,

Որ շողում է,ինչպես պահին

Այն հաղթական վերադարձի…

(հ.1 էջ 194-195)

Սակայն այս երկուսում էլ դեռ հեղինակը կորսված հայրենիքի պահանջատերը չէ,այդ թեման տիրապետող է դառնում 50-ական թթ-ից սկսած։ Սա բանաստեղծի ստեղծագործության ամենաերկար փուլն է,որն ունի որոշակիորեն ընդգծված աշխարհահայացքային առանձնահատկություն։ Շիրազը քննում է մարդու,կյանքի,Աստծո,անմահության և տիեզերքի

գաղտնիքները։ 1944թ. լույս է տեսնում «Բիբլիական» պոեմը,որը մարդու փառաբանումն է,աստվածացումը։

Խոհափիլիսոփայական երկին զուգահեռ ձևավորվում է նաև քաղաքացիական քնարը։ Ինչպես ժամանակի արվեստագետներից շատերը,Շիրազը ևս չէր կարող բացեիբաց ընդվզել անարդար և կեղծիքով պարուրված իրականության դեմ,բայց նաև չէր կարողանում լռել։Եւ քանի որ,Ս. Աղաբաբյանի բնորոշմամբ,Շիրազը «ծնյալ դիվանագետ» էր,դիմում է փոխաբերական պատկերների և պայմանական սյուժեների։ 1943թվականին,երբ ահ ու սարսափի մեջ ապրում էին ոչ միայն հասարակ ժողովուրդը,այլև՝ մտավորականությունը,երբ մարդիկ վախենում էին նույնիսկ անձայն մտածել «ժողովուրդների առաջնորդի» դեմ ըմբոստանալու մասին Շիրազը գրում է իր նշանավոր «Շղթայված մեղեդիներ» պոեմը։ Բանաստեղծի տաղերում սկսում է նշմարվել քաղաքացիական քնարերգության նոր՝անկեղծ,ըմբոստ,ընդվզող դրսևորումներ։

Քաղաքացիական սյուժեի շրջանակում,բանաստեղծը զարգացնում է փիլիսոփայություն՝մարդասիրության,բարության,չարության և այլ թեմաներով։ Դաժան են բնության օրենքները՝ուժեղը խժռում է թույլին,այդ դաժան օրենքները ներխուժել են մարդկային փոխհարաբերությունների մեջ,մարդը ևս սկսել է կառավարվել բնազդներով։ Սակայն կենդանիներից ամենազազանը՝առյուծն անգամ կարող է հուզվել,լաց լինել,իր ձագի փրկության համար,անցնել ցանկացած վտանգի միջով,խախտել բնության օրենքները։ Եւ մինգամայն հասկանալի է,որ մարդը,ում Շիրազը համարում է բնության գլուխգործոցը,պատրաստ է ցանկացած քայլի հանուն իր զավակի։ Ե՛ և առյուծը,և՛ մարդը պայքարում են. մեկն իր ձագի համար,մյուսն՝իր որդիների ազատության համար,սակայն երկուսն էլ խաբվում են դարձյալ մարդու՝բռնակալ արքայի կողմից։ Մի պահ թվում է,թե կարելի է թովել անգամ մարդ-գազանին՝ստիպելով նրան «արքայի գահից մարդու գահին իջնել»։Սակայն դա լոկ ակնթարթ է,հասունանում է բանաստեղծի բուն ասելիքը,նույնանում են բանաստեղծն ու իր ստեղծած կերպարը և հնչում է ճշմարտությունը առանց քողարկելու և պայմանականության։

Ու քանի բանտ կա մի խոսքի ընդդեմ,

Մի խոսքի ընդդեմ,մի անզեն խոսքի,

Ես իմ բազուկին օձ կփաթաթեմ

Եւ կնզովեմ օրենքը բազկի…

…Ազատությունն է բլբուլն հազարան,

Ազատությունը,կյանքի ու խոսքի,-

Իմ երգի թռռնե՛ր,փնտրեցեք նրան՝

Գահեր քանդելով շանթով ձեր բազկի։

Եւ մարդ անհատի,և՛ ողջ ազգերի ողբերգության հիմնական պատճառը և մեծագույն չարիքը բռնությունն է,որի դեմ պայքարը դառնում է քնարերգության հիմնական խնդիրներից մեկը։

Գլուխ 3. Անթաքույց պահանջատիրությունը։ Մարդու և ազգերի կատարելությանը հավատացող բանաստեղծը։

50-ական թթ. սկսած Շիրազը իր երկերում անթաքույց ազատություն է տալիս կորսված հայրենիքի և նրա պահանջատիրության գաղափարներին։ Սակայն երեխայի միամտությամբ Շիրազն հավատում է մարդկային խղճին.

Միշտ չեն մնա հայոց ծովերն ու լեռները անդնդում,

Լաց կլինի աշխարհի խիղճն,ինչպես Մասիսն իր բանտում,

Բայց սրբելով քո արցունքն էլ՝մայր խիղճն այնպես կճչա՝…

…Որ փոթորկող նրա շնչից ելած՝այս կողմ կթռչի

Քո վիթխարի Մասիսն անգամ,որպես մի լույս աղավնի։

(Ք.Հ. հ.2 էջ 173)

Մարդու և ազգերի կատարելությանն հավատացող բանաստեղծը,ինչպես իր նախորդներից մի քանիսը,հայրենքի փրկությունը կապում է «աշխարհի խղճի»,արդարության հաղթանակի,արդար դիվանագիտության հետ։ Այդ ոգով ու բովանդակությամբ գրված բանաստեղծությունները գերակշիռ մասն են կազմում Շիրազի հայրեներգության մեջ։

Ճիշտ է,վախի ու կասկածի պես մի բան սողոսկում է բանաստեղծի հոգին,սակայն ազգերի խղճի հանդեպ գրեթե մանկական հավատը դուրս է մղում ոչ խաղաղ ճանապարհով կորսված հայրենքիը հետ վերադարձնելու ակնթարթային գայթակղությունը։

Ինչպե՞ս լռեմ այսքան մոտ եմ Մասիսին,

Այսքան մոտ եմ,բայց կարոտ եմ Մասիսին։

Խաղաղություն,տես քեզ ինչքան եմ պաշտում,

Որ չեմ գոռում,թե վառող եմ…Մասիսին։

(հ.1 էջ 315)

Այս հայրենանվեր տողերի համար բանաստեղծին մեղադրեցին ազգայնամոլության մեջ։ Անշուշտ աազգայնամոլության ու հայրենանվեր երգերի մեջ տարբերությունը ակնառու է,աներկբա։ Իր ստեղծագործության գլխավոր թեման հայրեներգությունն էր,որ դրսևորվում էր բանաստեղծի ներկապնակի բոլոր գույներով։ Սակայն իր պաշտած Մասիսը տեսնելու հույսը կորցրած պոետը պարզապես կտակում է.

Ինձ էլ բերեք այն սուրբ ձյունից՝իմ հուշերի արցունքով,

Երբ կազատեք,լուրն ինձ բերեք ո՛չ թմբուկով,ո՛չ շուքով։

Քանզի սի՛րտս շատ է մաշվել Արարատի կարոտից,

Որ չմեռնեմ խնդությունից,լուրն ինձ բերեք…շշուկով։

Գլուխ 4.Ընդգծված բողոքը աշխարհի գերտերությունների դեմ,ազգային ազատագրական պայքարի կոչը

Շիրազի հայրենիերգության այս շերտի հանրագումարը «Հայոց դանթեական» պոեմն է,որի ստեղծման և վերամշակումների վրա հեղինակն աշխատել է ավելի քան չորս տասնամյակ՝ 1941 թվականից մինչև իր կյանքի վերջը։8000 տողանոց այս ստեղծագործության յուրաքանչյուր տո՛ղ,յուրաքանչյուր հատվա՛ծ ողբ է 1915թ. եղեռնի անմեղ նահատակներին։ Սակայն այն նաև ընդծված բողոք է՝ հզոր պետությունների,ազգերի և մարդկային անտարբերության դեմ,որոնց անկարեկից հայացքի ներքո կատարվեց դարի մեծագույն ողբերգությունը,ամենավայրագ ցեղասպանություններից մեկը։

Ու այս դարի սրտին պիտի

Փորագրեմ,որպես վերքեր,

Որպես հետքեր հայոց վշտի

Երեք միլիոն հայ անուններ,

Երեք միլիոն ամեղ զոհեր,

Որ մորթվեցին յաթաղանով

Քար մարդկության աչքի առաջ։

(ՀԴ. էջ 334)

Ողբի ու բողոքի,լացի և ցասումի տողերի հետ զուգահեռ՝Շիրազը շարունակում է բախել ազգերի ու մարդկության քնած խղճի դարպասները,որպեսզի առանց արյան,երկխոսության միջոցով լուծվի հայոց հարցը,և հայոց հայրենիքը վերադարձվի իր իրական տերերին։

«…վե՛ր կացեք,ո՛վ մեծ ու փոքր ազգ ու ցեղերի մեծ ու փոքր որդիք,գնանք ի մի ոգիացած ամեն սրտով ՝աշխարհով մեկ արթնացնելու խիղճը… ետ վերցնելու հողերն իմ հայոց,Մասիսն իմ գերի»։ (էջ 30)Պոեմում քիչ են վրիժառության կոչերը,օրինակ՝

Ով դուք ՝ վկաներ հավերժավրեժ հայոց եղեռնի,
Զարթնեք, որ պատժանքն այս անզույգ մեղքի կոկորդից բռնի,
Հատուցման արծիվն իր ժեռ վանդակից ի լույս սլանա…

(ՀԴ. էջ 7)

Սակայն դրանք ավելի շատ «բարոյական վրեժխնդրության» պոռթկումներ են և ոչ թե՝զենքի ու արյան.

Մորթված արգանդից մանուկը կելնի՝

Չի թողնի իր հայ Վանա ծովն անտեր,

Իր Մասիս լեռներն անտեր չի թողնի,

Կհասնի հայ ցեղն իր հայ Մասիսին…

(ՀԴ. էջ 233)

Եթե հաշվի առնենք,որ այս պոեմն իր ամբողջական տարբերակով Շիրազը հրատարակության է հանձնել բառացիորեն իր կյանքի վերջին և անգամ չի հասցրել տեսնել այն տպագիր վիճակում,ապա կարելի է ասել,որ շիրազյան հայրենապատումի աշխարհահայացքային այս շերտը ոչ միայն ամենածավալունն է ու ամենաընգրկունն է,այլև ամենագիտականը նրա քնարերգության մեջ։

Բնականաբար,ստույգ դժվար է ասել,թե երբ են նշված գաղափարները տեղի տալիս բանաստեղծի արդեն վերջին՝իրատեսական մտորումներին,կամ զուգահեռվելով նախորդ շերտին՝ստեղծում աշխարհահայացքային «երկիշխանություն»։ Երկրորդ փուլում (մոտավորապես 60-ական թվականների կեսերին) Շիրազը գրում է մի շարք բանաստեղծություններ,որոնց զգալի մասը երկար տարիներ մնաց անտիպ,որովհետև ուներ ոչ միայն ընդգծված բողոքի,այլև ըմբոստացման և մարտակոչի շեշտ։

Վշտի ոչ մի կնճիռ չկա արևմուտքի ճակատին,

Ինչո՞վ ամպեմ,որ կայծակեմ սուլթանների ճակատին,

Կես դար անցավ,բայց մահիկը դեռ չի հանվել կախաղան,

Մասի՛ս,գեթ մի քար տուր՝խփեմ արևմուտքի ճակատին

(Հ1, էջ 330)

Ստեղծագործական այս շերտի առանցքն են կազմում պատմական թեմաներով գրված երկերը,որոնց մեջ հերոսական դրվագներին զուգահեռ հնչում են ազատության և անկախության կոչեր։

Անշուշտ,պատմական թեմաներին անդրադառնալը Շիրազի համար երբեք ինքնանպատակ չի եղել,սակայն այս դեպքում կորցրած հայրենիքի ազատագրման գաղափարին ծառայեցնելու միտումը ակնհայտ է։Հայրենիքի ազատագրումը բանաստեղծի համար գերխնդիր է,և այդ խնդրին լուծում տվողն ի վերջո ազգն է։

Ով Սևանա քաջեր քիչ էլ դիմացեք,

Աստված չզարթնի՝կզարթնի ազգը

Մեկով կյոթնի իմ հույսի հասկը…

(Հ1, էջ 202)

Հազար սարեր կորցրածը՝սար ու ձորը ո՞նց մոռանա

Իմ դարում էլ ես իմ հայոց Ավարայրի դարն եմ պաշտում։

(Հ1, էջ 210)

Կուչ է եկել Հայաստանը Արագածի լանջին,

Եւ կսպասե Արարատը Մամիկոնյան քաջին։

(Հ1, էջ 225)

Յոթերորդ ծուռն հայ Սասունի,

Միակ շիտակն հայ ցասումի,

Կանգ չի առնում ոչ մի վայրկրան

Իղձ-Անդրանիկն հույսով Հայկյան,

Խթանում է ձին մարմարե,

Որպես կռվի մի մարգարե։

(Հ1, էջ 272)

60-ական թվականներից մինչև կյանքի վերջը Շիրազը շարունակաբար մշակում և վերամշակում է իր ստեղծագործությունները։

Շիրազը իր առաջ նոր խնդիր էր դրել՝իր վերջնական ասելիքը որպես պատգամ հարազատ ժողովրդին հասցնելն էր։ Իսկ այդ պատգամն արդեն չէր սահմանափակվում ըմբոստ պահանջատիրությամբ,նա հասել էր այն կարևորին,նրան,որի մասին տասնամյակներ առաջ արդեն Չարենցը գրել էր. «Ով հայ ժողովուրդ,քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»։

Յոթ սիրտ կա իմ սրտի մեջ,յոթն էլ մի բան են տենչում,

Յոթն էլ դեպի Մասիս տանող կյանքիս ճամփան են տենչում,

Յոթը հարյուր հազար սիրտ կա ամեն մի հայ սրտի մեջ,

Ողջը մի սիրտ-Շիրազ դառել՝Մեծ Հայաստան են տենչում։

(Հ1, էջ 325)

Շիրազի ստեղծագործություններում հնչում է արդար վրեժի և հատուցման պահանջը,կարծես թե տասնամյակները ոչինչ չեն փոխել դարասկզբի հայ գրականության և ներկա հայ գրականության մեջ։

Թվում է՝Շիրազը նույնպես ժամանակակիցն է հայոց մեծ եղեռնի ականատես բանաստեղծների,նրանց հետ «եղեգնյա գրչով երգում է վրեժ» և եղեգնյա գրչից դարձյալ «ելանում է բոց…»։

Ես կմոռանամ իմ աստրծուն էլ,-

Բայց երբեք մոռնչն հայոց ցասումի,

Սպասումն արդեն գլխիս է ձյունել,

Բայց կգա,գիտեմ,դարն հատուցումի…

(Հ1, էջ 232)

Աշխարհահայացքային երրորդ շերտի ամենաբնորոշն ստեղծագործությունը,վերնագրված է «Ողբ Ղարաբաղի»,որը կարծես և՛ ողբ է,և՛ ազատության պայքարի կոչ,հայրենիքը իր որդիների բազկի ուժով ազատագրելու և պաշտպանելու։ Ղարաբաղը կորսված հայրենիքի մի փոքրիկ մասնիկն է,հայոց արծիվն է,որին սպառնում է օտար ջրերի ճայ դառնալու վտանգը.

Քեզ կուլ կտան մուղամները,բառդ կառնեն,վա՛յ Ղարաբաղ…

Շիրազի «ողբը» այս անգամ մի հնոց է,ուր պետք է կռվի հայոց հատուցման սուրը՝զավթիչներից ետ խլելու կորսված հայրենիքը,որի խորհրդանիշն է Արցախը։ Այս բանաստեղծությունը գրված 1962թ. թեև անտիպ է,սակայն հայտնի է ժողովրդին։

Դու չես ջոկվել, խլել են քեզ, որ մոռանաս երգերն հայոց,

Զորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց,
Ա՛խ, ե՞րբ պիտի լեռներիդ պես վեր բռունցքվեն ձեռներն հայոց,

Որ չթողնեն հայոց արծիվն օտար ծովին ճայ, Ղարաբա՛ղ…

Ցավոք,Շիրազը չտեսավ,թե 1988-ին՝իր վերջին պատգամին հարազատ՝ինչպես հազարավոր հայորդիների ձեռքերը վեր բռունցքվեցին՝սկիզբ դնելով հայոց նորօրյա ազատամարտին՝Արցախի ազատագրմանը։ Բայց նա մարգարեացել էր կանխատեսելով այդ պահը։ Կարծում եմ բախտավոր էր Շիրազը,որ չտեսավ մեր օրերը,բայց հուսով եմ,որ նրա պատգամը կիրականացնի հայ ժողովուրդը.

…հայ գրերը ոչ թե ավազին,

Այլ Արարատի ճակտին կգրենք…

(ՀԴ, էջ 332)

Դասի թեման – Հ. Շիրազի << Որն է բաբո, մեր հայրենիք>> բանաստեղծությունը:

Դասի նպատակը

- Սերմանել հայրենասիրություն, ներկայացնել բանաստեղծության այն հատվածները, որտեղ երևում է սերն առ հայրենիք:
- Զևավորել անհատական և մշակութային արժեհամակարգ:
- Գնահատել այլոց հույզերը, դրսևորել ապրումակցում:
- Զարգացել սեփական հույզերը, երկի հատվածները ստեղծագործաբար ներկայացնելու կարողունակությունը:

Դասի վերջնարդյունքները

- Ներկայացնել բանաստեղծության հիմնական գաղափարը:
- Ընկալել փաստերը, ցույց տալ հատվածները, որտեղ երևում է կարոտը կորսված հայրենիքի նկատմամբ:
- Վերլուծել և մեկնաբանել հեղինակի պահանջատիրությունը:
- Քննարկել, հայտնել դիրքորոշում բանաստեղծության առանցքային հարցերիր շուրջ:
- Կատարել գիտակցված ընտրություն հարցի լուծման տարբերակների մեջ:
- Ներկայացնել բանաստեղծության արդիականությունը,զուգահեռներ անցկացնել անցյալի և ներկայի մեջ:
- Ստեղծել շարադրանք, բանաստեղծությու՝ արծարծելով բանաստեղծության առանցքային հարցերը:

Դասի խնդիրները

Ա) կրթական

- Կազմել տեքստ և վերնագրել՝ << Իմ ամբողջական հայրենիք>>:

Լեզվական կարողունակություն և գրագիտություն:

- Համադրել հայրենասիրական մի քանի բանաստեղծություն՝ գտնել նմանությունները, տարբերությունները:

Սովորել սովորելու կարողունակություն:

- Ստեղծել միջավայր, որտեղ աշակերտը կարտահայտի սեփական զգացմունքները, դատողություններ կանի հայրենիքը վերամիավորելու շուրջ:

Ինքնաճանաչողության և սոցիալական կարողություն:

Մշակութային և ժողովրդավարական կարողունակություն:

- Խթանել մտածողության նոր ձևերը, ստեղծել նկարներ, ստեղծագործության պատկերասրահ:

Թվային և մեդիա կարողունակություն:

- Համացանցից գտնել նյութեր Արևմտյան Հայաստանի մասին:
- Լսել բանաստեղծությունը, գտնել բանաստեղծությանը վերաբերվող երգեր:

Ժողովրդավարական և սոցիալական կարողունակություն:

- Ներկայացնել սոցիալական տարբեր շերտերին պատկանող մարդկանց վերաբերմունքը առանցքային հարցերի շուրջ:

Բ) Դաստիարակչական:

- Սերմանել սեր շրջատատող աշխարհի նկատմամբ:
- Ձևավորել ազգային արժեհամակարգ:

<u>Արժեքներ:</u>

- Արժևորել հայրենիք հասկացողությունը:
- Ձևավորել պահանջատեր լինելու մարտահրավերները:

<u>Դիրքորոշում:</u>

- Կմատնանշի ամբողջական հայրենիք ստեղծելու ճանապարհները:
- Ցույց կտա հայրենիքը շենացնելու ուղիները:

Ուսացման մեթոդները:

Մտագրոհ – Այս մեթոդի շրջանակներում կարող ենք օգտագործել նկարներ, հատված ֆիլմերից, տվյալ ստեղծագործության ասմունքը:

Բանալի բառեր - Տեքստից կընտրի այն բառերը, որոնց միջոցով արտահայտվում է ստեղծագործության գաղափարը:

Քարտեղներ – Կարող ենք վերցնել Արևմտյան Հայաստանի քարտեզը և յուրաքանչյուր նահանգ առանձին փակցնել և ներկայացնել տեղեկություններ նրանց մասին:

Խմբային աշխատանք – Կարող ենք ունենալ աշխարհագրագետների, պատմագետների, լեզվաբանների, գրականագետների խմբեր:

Աշխարհագրագետները – կներկայացնեն տեղեկություններ Արևմտյան Հայաստանի գյուղերի, քաղաքների,լճերի, լեռների և այլնի մասին:

Պատմագետները – կներկայացնեն պատմական տեղեկատվություններ:

Լեզվաբանները – կկազմեն Արևմտյան Հայատանի տեղանունների բառարան:

Գրականագետներ – կներկայացնեն ստեղծագործության արտահայտամիջոցները:

Հեղինակի աթոռ – կարող ենք անցկացնել հարցազրույց հեղինակի հետ:

Ամփոփելով այս աշխատանքները երեխաները կեզրակացնեն, որ հայրենիքը բացարձակ արժեք է։

Եզրակացություն

Կատարելով այս աշխատանքն եկա այն եզրակացության,որ այս և նման մյուս հեղինակների ստեղծագործությունների իմացություն է նաև,որ ձևավորում է դեռահասի մեջ հայրենասիրություն։

Շիրազը ծնվեց իր մեջ ունենալով ողջ հայոց պատմությունը,նա գրականություն մտավ իբրև մի վիթխարի խենթ,բոցավառված հայրենիքի սիրով և սիրտը փոխանցեց սերունդներին։

Նա կանգնեց Արարատի ստորոտում,երազեց ճախրել,տեսնել կորսված հայրենին՝ «որ ունի բարձր երկինք,…,Արագածի գագաթից ձայնել Մասիսին. «Թե՝ հե՛յ,բաբո,բավ չէ մենակ,պանդուխտ մնաս ամպերու տակ…»,հորջորջել «աշխարհիի խիղճը»,որ արթնանա։ Նա աշխարհին պատմեց հայի դանթեական ճանապարհի մասին,սգաց վիշտը Տիգրան Մեծի և գովերգեց «հայոց հրաշք» Մաշտոցին։

Շիրազը քննեց աշխարհն,Աստծո մեծագույն գլուխգործոցը՝մարդուն,որոնց մեջ առանձնացրեց իր տեսակը՝հայը,եղավ երազկոտ,բայց ցեղակրոն՝հպարտությամբ կրեց իր գենը և պատգամեց սերունդներին.

Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարությանդ ուժն է ծով,
ՈՒ երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
ՈՒ կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի։

……

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան։

Հ.Շիրազի հայրենասիր ստեղծագործությունների հանգամանալից ուսումնասիրությանը հիմք է տալիս անելու նաև մի շարք այլ եզրակացություններ.

•Ժողովրդի ազգային հոգեկերտվածքի և գեղարվեստական մտածողության խորքային երևույթների աղբյուրը՝ցեղի հազարամյա պատմություն է։

•Ազգային մշակույթն ու պատմությունը մշտապես եղել են այն անսպառ գանձարանը,որից մեծապես ոգեշնչվել է Շիրազը,և որի ուղղակի դրսևորումները նկատելի են գրողի ստեղծագործություններում։

•Գրականությունն այն միջոցն է,որը հնարավորություն է տալիս գրողին մաններելու,տարբեր ճանապարհներով ընթերցողին հասցնելու այն մտքերը,որոնք ուղղակիորեն արտահայտել կա՛մ ահնար է,կա՛մ վտանգավոր։

•Շիրազի հայրեներգությունը,հայրենասիրական ստեղծագործության նոր հոգեբանություն է բերում մեր գրականություն,հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ,որ պարտադրված էր հայ գրողին սեփական ժողովրդի ողբերգական ճակատագրով։

•Շիրազի ստեղծագործությունը հայ մշակույթի և գրականության ազգաբանական դիտարկման և ուսումնասիրության անսպառ աղբյուր է։

•Բանաստեղծի պոեզիայում հայրենիքը առանցքային դեր ունի,և նրա ընկալումը առանձնահատուկ է։Բանաստեղծը հայտնագործում է հայոց իրական հայրենիք իր ամբողջության մեջ։

•«Արարատապաշտությունը» գերակա դիրք է զբաղեցնում Շիրազի հայրենապատումում

•Կորսված հայրենիքի բնապատկերները,կարոտի ցավը,բողոքի ու ընդվզման ալիք են դառնում բանաստեղծի հոգում և պահանջատիրության կոչ հնչեցնում։

•Հ.Շիրազի ստեղծագործության մեջ ցայտուն արտահայտված է հայրենապաշտությունը,հայրենիքը ամենից և ամեն ինչի վեր դասելու ցանկությունը,հայրենիքն իբրև բացարձակ արժեք ընկալելու գերնպատակը։